

# Համաշխարհային Բ. Պատերազմին Հայկական Բարձրաւանդակը գրաւելու չգործադրուած ծրագիր մը

ԶԱԻՆ ՄՍԸՐԼԵԱՆ

Նացի բռնապետը՝ Ատուֆ Հիթլեր, 1941 թ.ի 22 Յունիսի վաղ առաւօտուն, հակառակ 1939 թ.ի գերմանո-սովետ ոչ-յարձակումի դաշնագրին, գործադրութեան կը դնէր «Պարպարոսա» ծրագիրը: Արդարեւ, այդ օր գերմանական ուժերը Սովետ. Միութեան դէմ իրենց ներխուժումը կը սկսէին: Բնական է որ այս նախայարձակումը իր ամենայետին մանրամասնութեան մէջ կը ծրագրուէր նոյնիսկ այն օրերուն; երբ 1940 թ.ի Նոյեմբերին՝ Ռիպլնթրոփ-Մոլոթով խօսակցութիւնները տեղի կ'ունենային Պերլինի մէջ: Այդ խօսակցութեանց ընթացքին արծարծուած էին Պալքաններու, Թուրքիոյ եւ Պարսկաստանի առնչութեամբ հարցեր: Սովետ. Միութեան արտաքին գործոց նախարար Մոլոթով նկատած էր թէ Հիթլեր խնամքով կը պաշտպանէր Թուրքիոյ շահերը, «Թուրքիան նկատելով բացայայտօրէն իր ներկայ դաշնակիցը, կամ՝ ամէն պարագայի, ապագայ դաշնակիցը»(1): Հուսկ՝ սովետական կառավարութիւնը եզրակացուցած էր թէ Թուրքիա «սերտօրէն կապուած է Հիթլերական Գերմանիոյ, կամ՝ մտադրութիւն ունի անոր կապուելու»(2):

«Պարպարոսա» ծրագիրը իրագործելու ճամբուն վրայ նացի

1) Սովետական Տեղեկատուութեան գրասենեակ, Պատմութեան Զեղծարարները, հրատարակութիւն «Թրուտ» քերթի, Պէյրութ, 1948, էջ 68:

2) Նայմը:

Գերմանիան օգտագործած էր Թուրքիոյ ունեցած վախը սովետներուն հանդէպ, քանի որ Սովետական Միութիւնը նեղուցներու դաշնագրին վերանայումը կ'ուզէր, եւ 1914 թ.ի միջազգային սահմաններուն վերադառնալու յաւակնութիւնը կրնար ունենալ: Գերմանիա յաջողած էր Սովետական Միութեան վրայ իր ներխուժումէն չորս օրեր առաջ՝ 1941 թ.ի 18 Յունիսին, Թուրք եւ գերման բարեկամութեան եւ ոչ-նախարարական դաշնադիրը ստորագրել: Այս դաշնադիրը խախտում մըն էր 1929 թ.ի Դեկտեմբերի 17-ին Անգարայի մէջ ստորագրուած սովետ եւ Թրքական համաձայնագրի Բ. յօդուածին: Ըստ այս յօդուածին՝ կողմերը պարտաւոր էին իրար տեղեակ պահել այլ պետութիւններու հետ քաղաքական դաշնադիր մը կնքելու պարագային, եւ առանց միւս կողմի համաձայնութեան՝ այդպիսի պայմանագիր մը չստորագրել(3): Բայց միայն 1941 թ.ի Յունիսի 25-ին էր որ Թրքական կառավարութիւնը Մոսկուայի իր դեսպանին միջոցով սովետական կառավարութեան կը տեղեկացնէր թէ Թուրքիա որոշած է իր չէզոքութիւնը պահել գերման եւ սովետ պատերազմին մէջ(4): Այսուհանդերձ՝ Թուրքիան կառավարող շրջանակները շատ դժէքով Սովետական Միութեան դէմ Գերմանիոյ շղթայադերձած պատերազմէն եւ կը յուսային հողամասեր կորզել Սովետական Միութենէն, անոր պարտութեան պարագային:

Թուրքիա՝ առ այդ իր ձեւական չէզոքութիւնը օգտագործեց ի վնաս Սովետ. Միութեան եւ ի շահ Առանցքի երկիրներուն: 1941 թ.ի Յուլիսի 9-ին, Թուրքիան խախտելով Մոնթրոյի դաշնադիրը, կը թոյլատրէր գերմանական «Ձեկֆալկէ» ռազմանաւին նեղուցներէն անցնելով Սեւ Մով մտնել, իսկ Օդսսոսոսին՝ նոյն ձեւով կ'արտօնուէր Փաշխտական Իտալիոյ «Տարվիդիօ» ռազմանաւին Սեւ Մով մուտքը(5):

Մինչ Սովետական Միութիւնը գերմանական ներխուժման կ'ենթարկուէր, անդին, Թուրք մամուլը հակա-սովետական արտայայտութիւններով կ'ողողուէր եւ Թուրանական զսպում զգացումները հրապարակային իրենց լայն արտայայտութիւնները կը գրտնէին: Այսպէս՝ փան-Թուրքական «Պոզըրթ» ամսագիրը, իր Յուլիս, 1941 թ.ի համարին մէջ «Թուրքիզմը կը Սպասէ» խորագրեալ

3) Ռ. Մահալեմ, Սովետ-Թուրքական Յարաբերութիւնների Պատմութեան Հակադիտական Լուսարանումը Ժամանակակից Թուրք Պատմագրութեան մէջ, Նքւամ, 1964, էջ 89:

4) Նոյնը, էջ 90-91:

5) Նոյնը, էջ 91:

յօդուածին առնթեր կը հրատարակէր «Մեծ Թուրքիայի քարտէսը», որուն սահմաններուն մէջ մտցուած էին նաեւ Անդրկովկասի (ուրեմհն Հայկական ՍՍՀ-ի) ու Միջին Ասիայի սովետական հանրապետութիւնները(6) :

Սովետական Միութեան հանդէպ Թուրքիոյ ցուցարեբած այս դէրքը՝ Թուրքիոյ հետ 1939 թ.ի դաշինքով կապուած եւ անոր բարեկամ Մեծն Բրիտանիոյ մէջ իսկ լաւ ընդունելութիւն չէր գտներ :

Սովետական Միութեան վրայ Գերմանիոյ յարձակած օրն իսկ, Անգլիոյ վարչապետ Ուինսթըն Չըրչիլ, Հասարակաց Տան մէջ ճառ մը կը խօսէր, որուն ընթացքին ի միջի այլոց կ'ըսէր. «Յետոյ միտքս կ'երթայ դէպի ես, դէպի այն տարիները եւ օրերը, երբ ուսական բանակները մեր դաշնակիցներն էին Հասարակաց նոյն մահացու թշնամիին դէմ, եւ անոնք կռուած էին նոյնքան քաջութեամբ եւ օգնած դաշնակիցներուն յաղթանակ տանելուն, բայց աւաղ, անոնք, ոչ մեր սխալով, բոլորովին զրկուեցան իրենց բաժինէն»(7) :

Այս տողերը խորապէս կը մտահոգէին Թուրքերը, քանի որ անոնք այդ տողերուն մէջէն կը տեսնէին իրենց երկրին հողային ամբողջականութեան սպառնալիք մը : Արդարեւ զաղտնիք չէր այլեւս որ 1915 թ.ի Մարտին, Անգլիա, Ֆրանսա եւ Ռուսիա զաղտնի համաձայնութիւն մը կնքած էին ի վնաս Օսմանեան Կայսրութեան : Ապա, հետագայ յուշագրերով վերահաստատած էին իրենց ծրագրերը : 1916 թ.ի Ապրիլի 26-էն սկսեալ, Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սազանով, Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Ժորժ ֆիքօ եւ Մեծն Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար Սըր Էտուրըտ Կրէյ յուշագրիներ փոխանակած էին, ըստ որոնց, պատերազմէն ետք, Օսմանեան Կայսրութեան Հայկական նահանգները (Էրզրում, Պիթիւս, Վան, եւայլն) Ռուսիոյ պիտի կցուէին : Բայց ձարական կայսրութեան տապալումը, ու Փետրուարեան ու Հոկտեմբերեան յեղափոխութիւններէն ետք ստեղծուած իրերու նոր կացութիւնը պատճառ եղած էր որ այս զաղտնի համաձայնագիրը չյարգուի :

Մեծն Բրիտանիոյ Ֆորէյն Օֆիսը Թրքական մտահոգութիւնները բոլորովին անհիմն դտնելով հանդերձ, ամբողջովին ալ անտըրամաբանական չէր գտներ զայն : Անգարայի բրիտանական դեսպան Սըր Քնաչպուլ Հիւկըսըն, 1941 թ.ի Յունիսի 27-ին Լոնտոն կը հե-

6) Նայճը, էջ 102 :

7) Translations of crown-copyright records in the public record Office appear by permission of the Controller of H. M. Stationery Office, London. F. O. 371/30092.

ուսուցիչը որ «Թրքական կառավարութիւնը կը արամարանէ թէ այն ակնարկութիւնը որ Ռուսիա ոչինչ ստացաւ վերջին պատերազմին, կը նշանակէ որ այս պատերազմէն ետք բան մը պիտի ստանայ», եւ Լոնտոնի կը տեղեկացնէր թէ Թուրք կառավարութիւնը հեղինակաւոր հերքում մը կը սպասէր(8) :

Թուրք կառավարութիւնը իր նեղուած ըլլալը կը յայտնէր նաեւ ամբողջովին անտեսելով բրիտանական ղեկավարներէն թելադրանքները, իր արտաքին գործոց նախարարին բերնով տրուած ճառէն դուրս ձգելով զանոնք: Այդ թելադրանքները կը վերաբերէին ԺԹ. դարու անդլո-թուրք յարաբերութիւններուն եւ Մեծն Բրիտանիոյ այդ դարու ընթացքին տուած նեցուկին: Բրիտանական ղեկավարը կ'որոշէր ոչինչ ընել, բացի «լաւ շնորհքով ընդունել այս անհամ ճառը», բայց կը թելադրէր Ֆորէյն Օֆիսին, որ Լոնտոնի Թուրք ղեկավարին յայտնէր թէ անդլիացիք չէին սիրած այդ ճառը(9) :

Հաղորդակցութեանց պատճառած ուշացումներուն հետեւանքով, 1941 թ.ի Յունիսի 30-ին էր միայն որ Ֆորէյն Օֆիսը հեռագրով Անդարալի իր ղեկավարին միջոցով Թրքական կառավարութեան կը յանձնէր հետեւեալ յայտարարութիւնը.

«Ա. Նորին Վեհափառութեան կառավարութիւնը ոչ մէկ նպատակ ունի Գերմանիոյ հետ պատերազմի մէջ եղող այլ երկրի մը հետ համաձայնութեան դալու, որ Թրքական հիմնական շահերու դէմ պիտի ըլլար:

Բ. Նորին Վեհափառութեան կառավարութիւնը շատ խղճմտօրէն պիտի յարգէ ապաղային՝ ինչպէս անցեալին Թրքական հանրապետութեան հողային ամբողջականութիւնը:

Գ. Նորին Վեհափառութեան կառավարութիւնը փոխադարձ օժանդակութեան 1939 թ.ի Հոկտեմբերի դաշինքը կը նկատէ հիմը թլրբական հանրապետութեան հետ իր յարաբերութիւններուն»(10) :

Թուրքերը մօտէն կը հետեւէին կացութեան: Անոնք անվերապահօրէն խանդավառ էին Սովետական Միութեան վրայ Գերմանիոյ նախաձեռնած ներխուժումով: Սակայն Սուրիոյ մէջ, դաշնակից բանակները որոշ յաջողութիւն մը արձանագրած էին Վիշիի գործերուն դէմ, բայց Թուրքերու վրայ ազդելու համար օգտագործելի որպէս ազդու միջոց, անհրաժեշտ էր որ դաշնակից ուժերը Սուրիոյ մէջ արագ յաղթանակ մը արձանագրէին: Այն օրը, երբ Մեծն Բրիտանիան դիւանագիտական պատշաճ բառերով կ'երաշխաւորէր

8) Նայձը:

9) Բ. Օ. 371/30127.

10) Բ. Օ. 371/30092.

Թուրքիոյ հողային ամբողջականութիւնը, եւ կը ջանար փարատել Չըրչիլի ճառին հետեւանքով ստեղծուած Թրքական վարերը, Ֆորէյն Օֆիսի նոյն օրուան ատենագրութիւնները բացայայտօրէն հակաթրքական ընոյթ կը կրեն:

1941 թ.ի Յունիսի 30-ին Ֆորէյն Օֆիսի ատենագրութիւնները, արձանագրուած Պր. Պենթինէյլի կողմէ, որոնք կը խօսին վերոյիշեալ հարցերու մասին, կը մնան խիստ հետաքրքրական:

«Պատերազմին սկիզբէն ի վեր, կ'ըսէ արձանագրութիւնը, Թուրքերը իրենց պարտաւորութիւնները մեզի հանդէպ կտրած են եւ իրենց՝ մեզի հետ կնքած դաշնագրին ողիւրն հակառակ աշխատած են այնպիսի աստիճանի մը, որ մէկը չի կրնար դանաճ չզգալ իրենցմէ: Բայց եւ այնպէս կ'ենթադրեմ որ պէտք է շարունակենք անհաւասար գործը փորձել, արդիւիւր ուր (Թուրքերը) թշնամիին գործօն դաշնակիցը չդառնան: Բայց կը կասկածիմ որ ասիկա պիտի յաջողի երբ վերամանական ուժերը Կովկաս հասնին, ինչպէս նաեւ՝ Թրակիոյ սահմաններուն վրայ, որքան ալ որ ապրանք եւ դրամ թափենք Թուրքիոյ մէջ: ... Կը յուսամ որ Սուրիոյ մէջ Ֆրանսական (Վիշի) զօրքերը կը յանձնուին, նախ քան որ սվաստիքան ծածանի հոն, ուր Նոյի տապանը հանդէսցաւ»(11):

Այլ նօթագրութիւն մը կ'աւելցնէ որ առանց Թրքական ընդդիմութեան հանդիպելու, Թուրքիան որպէս խարխիս պիտի ծառայէ վերամանացիներուն, հարուածելու համար Սուրիան եւ Իրաքը(12):

Թուրք կառավարութիւնը երբ մէկ կողմէ կ'ուզէր Մեծն Բրիտանիայէն իր հողային ամբողջականութեան վերոյիշեալ երաշխաւորութիւնը ստանալ, միւս կողմէ՝ ամէն կերպ սերտակցութիւն ցոյց կու տար նացի Գերմանիոյ: 1941 թ.ի Յունիսի 19-ին, Գերմանիոյ մօտ Թուրքիոյ ղեսպանը Պերլինի մէջ կը տեսակցէր Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Ֆոն Ռիպլընթրոփի հետ: Թուրքիոյ բրիտանական ղեսպանը Թուրք արտաքին գործոց նախարարը հարցապնդելով այս մասին՝ Լոնտոն կը տեղեկագրէր թէ Ֆոն Ռիպլընթրոփ Թուրք ղեսպանին յայտնած էր թէ Գերմանիա գործնականին մէջ յաղթած էր Ռուսիոյ, եւ այժմ իր ամբողջ ուշադրութիւնը պիտի դարձնէր Մեծն Բրիտանիոյ վրայ: Ասկէ ետք, աւելցուցած էր Ռիպլընթրոփ, Թուրքիան ճշդելու էր իր դիրքը եւ անուղղակիօրէն ակնարկած էր որ Թուրքիան կրնար թուրքերէ բնակուած ռուսական հողամասեր ստանալ(13):

11) Նայճը:

12) Նայճը:

13) Բ. Օ. 371/30127.

Յետ պատերազմեան շրջանին հրատարակուած դաղտնի փաստաթուղթերը կը վկային թէ Սովետական Միութեան վրայ Գերմանիոյ կատարած յարձակումէն ետք, թրքական կառավարութիւնը քննարկած էր Սովետ. Միութենէն հողամասեր իւրացնելու հարցը:

Նացի Գերմանիոյ Պերլինի դեսպան Ֆոն Փափէն, 5 Օգոստոսի, 1941 թ.ին Պերլին ուղարկած իր մէկ հաղորդագրութեան մէջ կ'ըսէր. «Ռուսիոյ մէջ Գերմանիոյ արձանագրած յաջողութեանց ի տես, թրքական կառավարական շրջանակները տակաւ աճող հետաքրքրութիւն ցոյց կու տան թրքո-սովետ սահմանէն անդին իրենց հայրենակիցներուն ճակատագրին հանդէպ, ի մասնաւորի Ազրպէյճանի թուրքերուն: Այս շրջանակները կը ջանան վերյիշել 1918 թրւականի դէպքերը, իրենց փափաքը վերոյիշեալ շրջանը կցելու, մասնաւոր Պաքուի քարիւղի հարուստ դաշտերը: Այս նպատակով մասնագէտներու յանձնախումբ մը կազմուած է, որ կը համախմբէ մասնագէտներ, որոնք Ապտիւլ Համիտի ժամանակ այս տեսակ գործերու մէջ եղած են: Այս յանձնախումբը պիտի հաւաքէ կապակից ամէն նիւթ եւ պիտի ապահովէ թիկունքը թուրքիոյ մէջ դստնող ամէն դասակարգի նոր Էմիլիոյ-ներէն եւ ներդաղթողներէն, ի մասնաւորի՝ Իրանի Ազրպէյճան նահանգէն, նոր թուրքիայի եւ Արեւելքը եղբորոջ թրքարնակ շրջաններէն մինչեւ Կասպից ծով»(14):

Այդ օրերուն անգլիական «Քոլիւրըզ» շաբաթաթերթի յօդուածագիր Ֆրենք Ճըրվիս արժանահաւատ տեղեկագիրներէն քաղած կը գրէր. «Ֆրանց Ֆոն Փափէն թուրքիոյ խոստացած է Հայաստանն ու Ազրպէյճանի սահմանամերձ շրջանները՝ եթէ թուրքիա չէզոք եւ ոչ-պատերազմիկ մնայ»(15):

Բացորոշ է որ թուրքիա կը ծրագրէր արեան նոր բաղնիք մը կազմակերպել Արաքսի միւս ափին եւ իրականացնել փան-թուրանական իր երազները, եթէ Սովետական Միութիւնը իյնար ապահով պարտութեան ճամբուն վրայ: Յետ պատերազմեան շրջանին Գերմանիոյ արտաքին գործոց նախարարութեան դաղտնի փաստաթուղթերէն քաղելով, «Փրաւտա», 1947 թ.ի Մարտ. 27-ի թիւով կը գրէր թէ Սովետական Միութեան վրայ թուրքիոյ յարձակումը նշանակուած էր 1942-ի Նոյեմբերին, երբ Պերլին յայտարարէր Մտալինկրատի անկումը: Յարձակումին նպատակը պիտի ըլլար Պաքուն զրաւել(16):

14) Charles Warren Hostler, *Turkism and the Soviets*, London, 1957, p. 172.

15) «Զարթօնք» Օրաթերթ, Պեյրուս, 2 Դեկտեմբերի 1967, էջ 3:

16) «Փրաւտա» Օրաթերթ, Մոսկուա, 27 Մարտի, 1947:

Այսուհանդերձ հակասական լուրեր կը հասնէին Թուրքիայէն: Մինչ թուրքեր բացայայտօրէն ուրախ էին Սովետ, Միութեան վրայ կատարուած ներխուժումէն եւ կը մտածէին պատեհ առիթէն օգտուել Կովկասի մէջ հողամասեր նուաճելու իրենց զերմանացի բարեկամներուն հետ միատեղ(17), անդին՝ այնպէս կը ձեւանային թէ զո՞հ չէին զերման յաղթանակներէն: Թուրքեր անգլիացիներու կ'ըսէին թէ, եթէ Կովկասը զերմաններուն իշխար, Թուրքիան պիտի պաշարուէր եւ իր կարգը պիտի դար զերման գրաման ենթարկուելու: 1941 թ.ի Յուլիսի 22-ին եւ 23-ին Լոնտոնի մէջ կը քննուէր «Թուրքիոյ վրայ զերմանական յարձակումին սպառնալիքը»(18): Լոնտոնի մէջ անկարելի չէին նկատեր որ Թուրքիան զերման զօրքերուն անցք տար Պաքուի նախկին հորերը գրաւելու համար, կամովին, կամ՝ պարտադրաբար:

Ճորէյն Օֆիսի վաւերաթուղթերուն մէջ կը նշուի թէ 1941 թ.ի Յուլիսի 15-ին սովետներու կողմէ պարտութեան մասնուած զերմանական 52-րդ զօրադուռնէն գրաւուած վաւերաթուղթերուն մէջ կային զաղտնի քարտէսներ՝ Եւրոպական Թուրքիոյ մասին, նեղուցներուն եւ զինուորական կեդրոնավայրերու մանրամասն ծրարագիրներ, եւ ծովի ճամբով զօրքերու ցամաքահասնման մանրամասնութիւնները(19): Միւս կողմէ՝ 1941 թ.ի Օգոստոսի 18-ին հոլանտացի նախարար Վիսսէր կը յայտնէր թէ զերմանացիք ծրագրած էին Թուրքիոյ ճամբաներու վրայ փոխադրութեան ծրագիր մը, իբրեւ թէ զէպի Պարսկաստան ապրանք փոխադրելու, բայց իրականու-

17) 1941 թ.ի Յուլիսի 28-ին, Ամատուական Գործակալութիւնը կ'արտասպէր Աժան Ֆրանսէզ Ինտերնասիոնի մէկ հազարգրութիւնը, տրուած Լոնտոնէն, ուր կը տեղեկագրուէր Անգլիոյ պետական ճախարարին տեսակցութիւնը 26 Յուլիսին քրքակամ եւ սովետ. դեսպաններուն հետ: Ֆրանսական հազարգրութիւնը կը ճշէր որ Թուրքիան Անգլիոյ հետ ամենէն բարեկամական կապեր պահելով հանդերձ, Սովետ. Միութեան հանդէպ շատ պաղ վերաբերմամբ մը ցոյց կուտար: Կ'ակնկալուէր որ Յոն Փափէնի միջոցաւ Գերմանիան ջանար գերմանական զօրքերու անցքը Թուրքիոյ ընդմէջէն ապահովել, քուրքերուն խոստանալով Սովետական վրաստանը եւ Կովկասի իսլամներէն բնակուած հոգրամասերը: Թէեւ այս հազարգրութիւնը հետագային՝ 13 Յուլիսի, 1941-ին, Ա. Ֆ. Ի. -ի կողմէ եւ քաշուեցաւ, այն բացատրութեամբ թէ իրենց հազարգրութիւնը պետական ճախարարի մամոյ տաւիսիսին վրայ հիմնուած չէր, բայց ամիկա կը մտնէր այդ շրջանին քուրք եւ գերման սերտ գործակցութիւնը, ինչպէս նաեւ քուրքերուն ուրիշներուն հոգրում տիրամալու տխրածակները:

18) F. O. 371/30092.  
 19) F. O. 371/30127.

Թեան մէջ նախապատրաստութիւն տեսնելու այն օրուան համար, երբ իրենք կը յուսային Կովկասը գրաւել: Այսուհանդերձ Ֆորէյն Օֆիսը 22 Օգոստոսին նման ծրագրէ մը անտեղեակ ըլլալը կ'արձանագրէր, այս տեղեկագրին կից արձանագրութեան մէջ: 1941 թ.ի Սեպտեմբերին, ոմանք այն տեսակէտը ունէին թէ Գերմանիոյ բռնապետը՝ Հիթլեր, կը ծրագրէր Թուրքիոյ արեւելեան նահանգներէն Արդուինի շրջանը գրաւել, տիրանալու համար Սեւ ծովու եւ Արարատի միջեւ այն շրջանին, որուն ի վերջոյ կը փափաքէր տիրանալ(20):

Գերմանացիներու վերագրուող նման ծրագրերներու գործադրութեան կարելիութիւնը աննշմար չէր անցնէր անդլիացիներու կողմէ, ինչպէս կը փաստէ ներկայ ուսումնասիրութեան վերջաւորութեան տրուած տեղեկագիրը, որ պատրաստուած էր Միջին Արեւելքի բրիտանական ուժերու կեդրոնատեղիին մէջ: Հոն նկատի առնուած էին Գերմանիոյ՝ Կովկասի վրայ յարձակման, եւ կամ, Թուրքիոյ՝ գերման զօրքերու անցքը արտօնելու հաւանականութիւնները:

Սովետական Միութիւնը օրհասական շրջանի մը մէջ էր գերմանական նախադարձակումին յաջորդող առաջին ամիսներուն: Գերմանական բանակը մեծ յաջողութիւններ կ'արձնադրէր: Ատոլֆ Հիթլեր 1941 թ.ի Օգոստոսի 21-ին կը հրամանագրէր նախ Խրիմի, ապա՝ ճարտարարուեստական եւ ածուխի հանքերով հարուստ Տոնցի դաշտի գրաւուելը եւ Կովկասի շրջանէն Ռուսիոյ եկող քարիւղի հայթայթումին կասեցումը: Այս վերջին նպատակը իրագործելու համար գերման Ֆելտ Մարշալ Ռուստատեթ Սեւ Ծովի ափերը պիտի գրաւէր, Ռոստովը եւ Մայքոփի քարիւղի դաշտերը առնելով, ու ապա՝ պիտի յառաջանար դէպի Ստալինկրատ, այսպիսով՝ Կովկասի հետ Մոսկուայի կապերը կտրելու(21):

Տակաւ զարգացող սովետ եւ անգլիական փոխյարաբերութիւններու այս շրջանին եւ Քիեւի՝ նացի գերմաններէն գրաւման նախօրեակին, Սովետ Միութեան վարչապետ Ստալին, Անգլիոյ վարչապետ Չըրչիլի անձնական պատգամ մը կը ղրկէր, որուն մէջ երկրորդ ճակատի մը ստեղծման մասին կը գրէր: Ստալին կը թելադրէր որ կարելի է 25-30 զօրաբաժիններ իջեցնել Արխանկէլ եւ

20) Edward Stevenson Murray, *On the Turks' Russian Frontier*, «National Geographic Magazine», Vol. LXXX, September 1941, p. 367.

21) William L. Shirer, *The Rise and Fall of the Third Reich*, New York, 1960, p. 857.

կամ՝ Իրանի ընդմէջէն զանոնք փոխադրել դէպի Սովետ . Միութեան հարաւային շրջանները(22) :

Յետ-պատերազմեան շրջանին Սովետ . Միութիւնը կը հաւաստիացնէր թէ «հակառակ դադափարարանական եւ զանազան դաշնակից պետութիւններուն տնտեսական սխտեմի տարբերութիւններուն, անգլո-սովետ-ամերիկեան համախմբումը դարձաւ զօրաւոր դաշնակցութիւն մը այն ժողովուրդներուն միջեւ, որոնք հիթլերականութեան դէմ ազատադրական պայքարին մէջ, իրենց ջանքերը միացուցած էին»(23) : Ուստի անգլիական վաւերացութեան մէջ յստակօրէն պարզուած սովետ օժանդակութեան խնդրանքը վերի պարբերութեան տրամադրութեամբ կարելի է բացատրել : Սովետ . Միութիւնը վերի պարբերութեան կողքին նաեւ կ'աւելցնէր . «Ինքնին հասկնալի է թէ, այդ ժամանակին ալ, պատերազմի ընթացքին, դաշնակիցներուն միջեւ որոշ հարցերու շուրջ հայեցակէտի տարակարծութիւններ գոյութիւն ունէին»(24) : Այդ տարակարծութիւնները նոյնիսկ հիմնական հարցերու շուրջ ալ կ'ըլլային :

Չըրչիլ կը պատասխանէր թէ «հարաւի մէջ մեծ մրցանակը Թուրքիան է : Եթէ կարելի ըլլայ Թուրքիան (ի նպաստ դաշնակիցներուն) շահիլ, ուրիշ զօրաւոր բանակ մը տրամադրելի պիտի ըլլայ : Թուրքիան կ'ուղէ մեզի հետ դալ, բայց կը վախնայ, եւ ոչ առանց պատճառի : Թերեւս բրիտանական նկատառելի զօրքերու խոստումը, եւ թեքնիք ապրանքներու հայթայթումը, որոնց մէջ Թուրքերը թերի են, վճռական ազդեցութիւն բանեցնէ անոնց վրայ : Ձեզի հետ պիտի սերտենք օգտակար օգնութեան որեւէ այլ ձեւ, հիմնական նպատակ ունենալով առաւելագոյն ուժը բերելու հասարակաց թշնամիին դէմ»(25) :

Այլ խօսքով՝ Չըրչիլ կը մերժէր Կովկասի շրջանին մէջ Սովետ . Միութեան կողքին ասպարէզ դալ եւ կը թելադրէր Թուրքիան սիրաշահիլ, այն Թուրքիան, որ Սովետ . Միութեան այդ շրջանները յափշտակելու ծրագիրներ կ'որոճար :

Թուրքիան, որ Չըրչիլի միջոցով կըրցած էր արդէն 1941 թ.ի Օգոստոսի 10-ին թէ Մեծն Բրիտանիայէն եւ թէ Սովետ . Միութեան նմանօրինակ երաշխաւորութիւններ ստանալ իր հողային ամբողջականութեան համար, չէր դադրեր դերմանացիներուն համակրելէ : Արդարեւ, թրքական պաշտօնական «Ուլուս» թերթը, 1941 թ.ի

22) Բ. Օ. 371/29490.

23) Պատմութեան Ձեղծարարները, Բշ. աշխ., էջ 67 :

24) Եռյնը, էջ 67-68 :

25) Բ. Օ. 371/29490.

5 Հոկտեմբերի իր թիւին մէջ, առանց իր ուրախութիւնը պահելու կը գրէր թէ «զերմանացիները բացարձակապէս ճիշտ վարուեցան յարձակում գործելով սովետներուն վրայ»(26) :

Անգլիոյ Ֆորէյն Օֆիսի դադանի ատենադրութիւններուն համաձայն, 1941 թ.ի Սեպտեմբերի 19-ին, Քիւեւի անկման օրը, սովետ դեսպան Մէյսքի՝ բրիտանական արտաքին գործոց նախարար Անթոնի Իտընի հետ կը տեսակցէր, Չըրչիլի՝ Ստալինի տուած պատասխանին տոնչուֆեամբ: Դեսպանը նախ իր յուսախարութիւնը կը յայտնէր պատասխանին՝ եւ հարաւային ճակատ մը բանալու թելադրանքին յստակ պատասխան մը չտրուելու մասին: Դեսպանը կը յայտնէր թէ անգլիացիք 600,000 զինուորներ ունէին Մերձաւոր Արեւելքի մէջ, որոնցմէ չէլ՞ն կրնար մեծ ուժ մը զրկել Ռուսիա, որ Տոնեցի դաշտը կորսնցնելու վտանգին մէջ էր: Մէյսքի՝ դաշնակիցներուն զինուորական ամենէն հրամայական հարցը կը նկատէր այս մէկը: Սովետ. Միութիւնը իր պահեստի ուժերը ռազմադաշտ իջեցնելէ առաջ կ'ողջէր գիտնալ թէ Մեծն Բրիտանիան, մինչեւ Նոյեմբերի վերջը օժանդակութիւն պիտի զրկէ՞ր Կովկաս եւ Տոնեցի դաշտը, որպէսզի իր ծրագիրները ըստ այնմ մշակէր(27) :

Անթոնի Իտըն, դեսպան Մէյսքի կը բացատրէր որ խնդիրը այդքան ալ պարզ չէր, թէ իրենք կը ջանային պարսկական ճամբան բանալ, Սովետ. Միութեան նիւթեր հայթայթելու համար: Իսկ եթէ զօրքեր զրկէին ցանկացուած շրջանները, զօրքերը կրնային հասնիլ ի վնաս նիւթերուն, որոնք կենսական էին Սովետ. Միութեան համար: Դեսպան Մէյսքի կրկին կը պնդէր որ ռազմական ուժ զրկելն էր կարելորդ, քանի որ եթէ զերմանացիները հասնէին Տոնեցի դաշտը, անոնց Կովկաս մուտքը պիտի դիւրանար: Իսկ եթէ Կովկասը կորսնցնէին, դժուար հաւանական էր որ Թուրքիա իր (ներկայ) դիրքը պահէր: Լաւագոյն կերպը Թուրքիան դաշնակիցներուն կողմը պահելու այն էր, որ անգլիացիք օժանդակէին Սովետ. Միութեան, Կովկասը կարենալ պահելու: Իտըն կը խոստանայ հարցը վարչապետ Չըրչիլի փոխանցել: Այսուհանդերձ՝ Իտըն տեսակցութեան ատենադրութեան մէջ կ'աւելցնէ որ դեսպանը կը չափազանցէր այնպիսի կարեւոր ուժի մը Միջին Արեւելքէն Կովկաս դիւրաւ փոխադրութիւնը եւ հոն կարենալ մնալը, նոյնիսկ եթէ այսպիսի ուժ մը դիւրաւ տրամադրելի ըլլար(28) :

26) «Ուլուս», 5 Հոկտեմբերի, 1941, Ձշուած Ռ. Ստեփանյանի Ձշ. աշխ. մէջ, էջ 91:

27) F. O. 371/29490.

28) Նայճը:

Մոսկուայի մէջ սովետ եւ անդլիական խօսակցութիւնները կը շարունակուէին: Սովետներ Մոսկուայի բրիտանական դեսպանին կը յայտնէին թէ, Կովկասի եւ Անդրկովկասի մէջ իրենց պահեստները բաւարար էին իրենց ժողովուրդին՝ ինչպէս նաեւ անդլիական որեւէ զօրքի, եթէ ան զրկուէր մինչեւ յառաջիկայ հունձքը(29):

1941 թ.ի Սեպտ.ի 25-ին Սըր Գնեչպուլ Հիւկըսըն Անդարայէն Լոնտոն՝ Ֆորէյն Օֆիսին կը տեղեկագրէր թէ Անդարայի մէջ զբոյցներ կը շրջին թէ անդլիացիք կը ծրագրեն ամէն կարելի օժանդակութիւն ընծայել սովետներուն եւ զօրք զրկել դէպի Կովկաս: Դեսպանը կը գրէր թէ ինք լրացրողներուն յայտնած է թէ դեսպանատունը որեւէ անդեկութիւն չունի այդ մասին: Դեսպանը ինք կը կասկածէր որ այս զբոյցները Առանցքի պետութեանց կողմէ կը քաջալերուին, քանի ծովակալ Քելլի՝ թրքական որոշ շրջանակներէ քաղելով տեղեկագրած էր թէ թշնամին կ'ուզէ անդլիացիները տեսնել Կովկասի մէջ զինուորական գործողութիւններու մէջ մխրճուած(30): Ֆորէյն Օֆիս 27 Սեպտեմբերին կը թելադրէ շարունակել նոյն պատասխանը տալ, թէ՛ տեղեկութիւն չունինք(31): Ապա՝ Ֆորէյն Օֆիսի ատենագրութեանց մէջ կը նշուի որ նման քայլ մը կրնայ հետեւիլ բրիտանական եւ սովետ զօրքերու կողմէ Պարսկաստանի դրաւումին, եւ ահնայատ էր կովկասեան քարիւղի հորերուն կարեւորութիւնը: Իրերու ընթացքը այդպիսին էր որ ընտանի պիտի ըլլար ենթադրել այդ շրջանին պաշտպանութեան մէջ սովետներուն օգնելը: Իսկ թուրքերը, որոնք կը հաւատան թէ թշնամին կ'ուզէ անդլիացիները տեսնել Կովկասի զինուորական գործողութեանց մէջ, շատ հաւանական է որ այս գաղափարը արտայայտեն, քանի որ կը խորհին թէ եթէ անդլիացիք Կովկասի մէջ զինուորապէս օժանդակեն սովետներուն, ասիկա կրնայ Գերմանիան թուրքիա քաշել: Ապա կ'եզրակացնէ թէ «իրողութեան մէջ ասիկա միայն գերմանացիներուն կրնայ օգնել, քանի որ այսպէս ընկելով մենք զմեզ շատ մեծ չափով կը տկարացնենք Միջին Արեւելեան ճակատի այլ շրջաններուն մէջ, ուր թշնամին պիտի կարողանայ հարուածել»(32):

Մոսկուայի բրիտանական դեսպանը՝ Սըր Սթաֆորտ Գրիփս, իր 1210 համարակիր, 28 Սեպտեմբերի 1941 թուակիր գաղտնի հեռագրով Ֆորէյն Օֆիսին կը տեղեկացնէր որ «որեւէ թելադրանք

29) Նայձը:

30) Նայձը:

31) Նայձը:

32) Նայձը:

Կովկասի մէջ, նոյնիսկ անուղղակի, թրքական միջամտութեան մը համար, շատ վտանգաւոր է», քանի որ թուրքերը կովկասեան հակա-սովետ տարրերէ բաղկացած զօրք ունին, եւ կրնան Կովկասէն մաս մը գրաւել եւ կամ՝ դերմաններուն զործիք ծառայել Կովկասի մէջ, սովետներուն համակիր տարրերը ճգմելու մէջ(33)։ Փորէյն Օֆիսը այս հեռադրին կցած իր ատենադրութեան մէջ կ'ըսէ որ ոչ մէկ ատեն թերադրանք եղած էր Կովկասի մէջ թրքական զօրքեր ղրկել, այլ շօշափել թրքական կառավարութեան միտքը, տեսնելու համար թէ պիտի կրնայի՞ն վարուիլ դերմաններու վարձկան հակասովետ կովկասեան ցեղախումբերու ղեկավարներուն հետ, զանոնք դսպելու համար(34)։

1941 թ. ի Սեպտ. 29-ին սովետ դեսպան Մէյսքի եւ Անթոնի Իտըն անդամ մը եւս կը խօսակցէին։ Մէյսքի կ'ըսէր թէ ուրախ էր լսելով որ Զօրավար Սըր Արչիպալա Վէյվըլը Թրիֆլիս պիտի այցելէր։ Այդ կը յայտնէր թէ ինք կը յուսար որ յարմար ատենին ըրիտանական զօրքերը իրենց տեղը պիտի գրաւէին սովետ զօրքերու կողքին(35)։

Գահիրէի Միջին Արեւելքի բրիտանական ուժերու կեդրոնատեղիին կից Միջ-Ասիական Պիւրոն եւս այն կարծիքն ունէր թէ պէտք էր Պաքուի քարիւղի դաշտերը «դաշնակից ապահով ձեռքերու մէջ ունենալ, եւ չթոյլատրել որ դերմանացիները տիրանային այդ շրջանին»(36)։ Հետաքրքրական է դիտել տալ թէ Սովետ. Միութեան Մեծն Բրիտանիոյ դեսպան Մէյսքի 18 Սեպտեմբերի օժանդակութեան խնդրանքէն առաջ, Գահիրէի Միջին Արեւելքի բրիտանական ուժերու կեդրոնատեղիին մէջ՝ 14 Սեպտեմբերի, 1941-ին իր վերջնական ձեւին մէջ դրուած էր կովկասեան ճակատը շահագրգռող սերտողութիւն մը, հաւանաբար Յուլիս-Օգոստոս ամիսներու դաղտնի տեղեկութիւններու հիման վրայ։

«Յոյժ դաղտնի» մակադրուած, «Գերմանիա եւ Կովկասը» խորագրեալ թիւ 6213 համարակիր եւ 14 Սեպտեմբերի, 1941 թրւակիր տեղեկագիրը, ստորագրուած՝ Լէյտենանտ-Գոլոննել (Գնդապետի տեղակալ) Ատրիան Սիմսընի կողմէ, որ Գահիրէի Միջ-Ասիական Պիւրոյէն էր, կը թերադրէր Հայկական Բարձրաւանդակը գրաւել, դերմանացիներէն առաջ։

33) Բ. Օ. 371/29491.

34) ՆայՖը։

35) ՆայՖը։

36) Բ. Օ. 371/29492. 6213.

**Տեղեկագրերը, է միջի ալոց, հետեւեալ զլիսաւոր միտքերը կը յայտնէր(37) :**

**ա. Սովետ. Միութեան վրայ դերմանական յարձակումին զլիսաւոր նպատակն է. Կովկասի տիրապետութիւնը, ուր Պաքուի քարիւղի դաշտերն են որ Սովետ. Միութեան քարիւղին 70 առ հաբիւրը կը հայթայթեն :**

**բ. Սովետներուն հեռանալուն, կովկասեան հանրապետութիւններուն ինքնավարութիւն տալու դերմանական փրօփականտը կրնայ պատճառ ըլլալ որ Անդրկովկասը նախայարձակին զիւրին որս մը ըլլայ :**

**գ. Հայկական Բարձրաւանդակը թշնամի ձեռքերու մէջ ըլլալուն, անգամ մը որ թշնամին Կարսը անցնի, Պաքուի ճամբան բաց է, ըլլայ Արաքսի, կամ Կուրի հովիտով :**

**Եթէ դերմանացիները յաջողին հայերու հաւատարմութիւնը սովետներէն շեղեցնել՝ ինքնավարութեան եւ իրենց ազգային ճրգտումներու իրականացման խոստումներով, ոչ մէկ կասկած կայ որ հայերը կրնան մեծ ծառայութիւններ մատուցանել(38) :**

**Այլ խօսքով, Հայկական Բարձրաւանդակին դրաւումը առաջ-**

37) Նայք :

38) Լոմոնոսի «Թայմզ» ազգեցիկ քերքը Սովետ. Միութեան վրայ Գերմանիայ մերխուժուէն երկու օրեր ետք, 24 Յունիսի, 1941-ին կը գրէր թէ գերմանացիք ամէն միջոց պիտի գործածէին սովետական վարչաձեւը մերքնապէս ակամակաբերելու՝ մերմակ ռուսերը եւ ոչ-ռուս ազգայնականները օգտագործելով, ինչպէս հայերը, որոնք պատերազմին սկիզբէն ի վեր փոք-գերման հակումներ ցոյց կու տան: «Թայմզ»ի 19 Յունիսի, 1941 թիւին մէջ ժիրայր Միսսֆեան, Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ դեկլարուած «Հայկական պատուիրակութեան» ամուսնով կը ժխտէր «Թայմզ»ի 24 Յունիսի 1941 թ.ի տեսակէտը, ինչպէս նաեւ ամերիկեան քերքի մը լուրը՝ թէ մացիները Հ. Յ. Դաշնակցութիւնը ընտրած էին որպէս հիմնաբարդ գործակից գործածելու, ամենց խոստանալով «ազատ Հայաստան մը»: Միտաֆեան կը յայտնէր թէ գերմանացիք հակա-հայ եղած էին եւ թէ հայեր դաշնակիցներու յաղթանակին կը յուսային:

1941 թ.ի Յունիսի 30-ին իսթամպուլէն անգլիական դեսպանատունը Ֆորէյմ Օֆիսին կը տեղեկացնէր թէ Պերլինի մէջ Ուէրամիոյ, Վրաստանի եւ Արքայէնանի համար ախարակամ կառավարութիւններ կը պատրաստուէին: Իսկ Գանիքէն անգլիական դեսպանատունը 2 Յունիսին կը հաղորդէր թէ Կովկասի մէջ՝ ըստ լեհական մերկայացուցչութեան մոր ժամանած քարտուղարին, գերմանացիներէ մերշնչուած ապստամբութիւն մը Ռուսիոյ դէմ հաւանական էր: Այս գոյգ տեղեկագիրները Լոմոնոսի կը հասնէին 12 եւ 14 Յունիսի, 1941-ին: 29 Յունիսի, 1941-ին Լոմոնոսի «Տէյմս Թեյնկերս» քերքը կը գրէր թէ հիւսիսային իրանի մէջ գործող գերմանացիք

նակարդ կարեւորութիւն ունի, քանի կ'իշխէ Հարաւէն՝ Պաթումէն Պաքու յառաջացման դիժին:

Իբր եզրակացութիւն, անդլիացի աստիճանաւոր ղինուորականը կը գրէ թէ, Հայկական Բարձրաւանդակը (Էրզրում, Կարս, Լենինական, Շուշա, Զուլֆա-Էրզրում) կը կազմէ ռազմապիտական առաջնակարգ կարեւորութիւն ներկայացնող շրջան մը, եւ բանալին է Անդրկովկասին, եթէ ապահով դաշնակիցի մը ձեռքերուն մէջ մընայ: Քանի որ՝

ա. Հայկական Բարձրաւանդակը կը փակէ դէպի Կովկաս Հարաւային ճամբան՝ Տրապիզոնէն եւ Էրզրումէն,

բ. Կ'իշխէ Կուրի հովիտին վրայ եւ Պաթումէն Պաքու յառաջացման արեւելեան դիժին,

գ. Կը կազմէ մնայուն սպառնալիք մը թշնամիին Անդրկովկասի հաղորդակցութեան դիժերուն եւ կամ՝ որեւէ շարժումի՝ Անդրկովկասէն դէպի Հարաւ:

գործակալներ Սովետական Կովկասի հայերուն մէջ «ազգային յեղափոխական շարժում»-ի մը սկսած էին: 24 Յուլիսի, 1941-ին «Քրեոյըն Սոյնս Մոնիթոր» քերթը Անգարայէն կը տեղեկագրէր մոյճ լուրք, աւելցնելով թէ «այս պիտի գրգռէր քուրճերը, որպէսզի դէպի հիւսիս յառաջամային ի վնաս Մոսկուայի»: Թերթը կ'աւելցնէր թէ մացիները հայերուն խոստացած էին Մեծ Հայաստան մը, որ քուրճերու ձեռքին մէջ եղած կարգ մը հողեր պիտի պարփակէր: Այսուհանդերձ «Տէյ-լի Քուլիկրաֆ» իր 7 Օգոստոսի, 1941-ի քիւի մէջ կը գրէր թէ Հ. Յ. Դաշնակցութիւնը Հիթլերի դէմ կռիւն մէջ վնասկամ էր: Ժ. Միսաքեան, 2 Օգոստոսի, 1941 թուակիր նամակով մը, յամուս «Հայկական պատուիրակութեան» բրիտանական արտաքին գործոց մայրաքաղաք Ամբոնի իտընի կը վստահեցնէր թէ հայերը հաւատարիմ էին դաշնակիցներուն դատին եւ տեսակցութիւն կը խնդրէին: Այս նամակէն բաւական ուշ, 19 Սեպտեմբերին, Ֆոքէյն Օֆիսը, իտընի անունով, կը պատասխանէր «Հայկական պատուիրակութեան», թէ «Պր. Իտըն գահումակութեամբ արձանագրած էր այդ նամակին մէջ դրուած ապահովութիւնները դաշնակիցներու դատին նկատմամբ հայոց հաւատարմութեան մասին» եւ թէ կարիքը չէր տեսնուի տեսակցութեան մը (Ֆ. Օ. 371/27056): Այս հակասական լուրերէն եւ տրուած ապահովութիւններէն ետք՝ 22 Սեպտեմբերի, 1941-ին Անգարայի բրիտանական դեսպան Սըր Քոնաչպուլ Հիւլըքմէ՝ Ֆոքէյն Օֆիս եկած հեռագիր մը կը հաստատէր թէ Կովկասի մէջ շատ մը ցեղեր եւ ցեղախումբեր գերմանացիներուն վարձկան են եւ թէ անոց պարագլուխները Թուրքիոյ մէջ էին: Ֆոքէյն Օֆիսի 24 Սեպտեմբերի տեսնագրութիւնները կ'եզրակացնէին թէ «անկասկած դաշնակիցի պիտանքները անոց մէջ են» (Ֆ. Օ. 371/29490): Ապա՝ նովեմբերը չնեղացնելու համար՝ անգլիացիք կ'արոշեն ամէն կայ յոգի հակա-սովետ Հ. Յ. Դաշնակցութեան հետ (Ֆ. Օ. 371/34964):

Միւս կողմէ, եթէ Հայկական Բարձրաւանդակը թշնամի ձեռքերու մէջ ըլլայ, Պաքուի դուռը լայնօրէն բաց պիտի ըլլայ:

Իբր յանձնարարութիւն, բարձրաստիճան սպան կը դրէր.

ա. Եթէ Գերմանիան Կովկասի վրայ յարձակի կամ Թուրքիան Կերմանական զօրքերու անցըր արտօնէ, դաշնակիցներ պարտին դըրաւել Հայկական Բարձրաւանդակի արեւմտեան մասը, այսինքն՝ Կարս, Էրզրում եւ Պայազլուի շրջանը:

բ. Պօսակցութիւններու պէտք է սկսիլ ոռոսերուն հետ, և երբ կարճ ժամանակամիջոցով լուր տրուի, պատրաստութիւններ տեսնել:

գ. Քաղաքականութեան պատճառով ներկայիս ուղղակի առաջարկ կարելի չէ ընել Թուրքիոյ քիւրտերուն, բայց եւ այնպէս իրենց կարեւորութիւնը պէտք է մնայուն կերպով միտք պահել եւ իրենց հետ կապ պահել անմիջապէս որ պարագաները թոյլատրեն:

Բարձրաստիճան սպան որ Միջին Արեւելքի բրիտանական ուժերու կեդրոնատեղիին մէջ էր, իբր վերջին կէտ մը կը յայտնէր թէ կանդորդառնար որ Հայկական Բարձրաւանդակի զբաւուսը Մեծն Բրիտանիոյ կառավարութեան քաղաքականութեան զլիսաւոր հարցերուն կապակից էր եւ առ այդ՝ լուրջ նկատառում ցոյց տրուելու էր իր ծրագրին: Այս եզրակացութեան ներքեւ ստորագրած է Գահրէի Միջ-Ասիական Պիւրոյի բարձրաստիճան սպայ Ատրիան Սիմսընը: Տեղեկագիրը Լոնտոն՝ Յունէյն Օֆիսի մէջ ստացուած է միայն 28 Հոկտեմբերի, 1941-ին: Ապա՝ երկու ասիթներով, 6 եւ 28 Նոյեմբերի, 1941-ին, Յունէյն Օֆիսի բարձրաստիճան անձնաւորութիւնները հոն արձանագրած են իրենց նկատողութիւնները: Առաջին՝ թէ սոյն տեղեկագիրը այլեւս ժամանակավրէպ դարձած է եւ երկրորդ՝ Հայկական Բարձրաւանդակը զբաւելու յանձնառութիւնը անգործնական է, և միշտ ալ այդպէս եղած է(39):

Միջին Արեւելքի բրիտանական ուժերու կեդրոնատեղիին եկած այս առաջարկը Լոնտոնի մէջ ընդունելութիւն չլտաւ ոչ միայն վերոյիշեալ երկու պատճառներով, ոչ միայն Չըրչիլի փոթութեամբ համոզումներուն իբր հետեւանք, այլ նաեւ անոր համար որ Մեծն Բրիտանիա երաշխաւորած էր Թուրքիոյ հողային ամբողջականութիւնը եւ միւս կողմէ՝ Միջին Արեւելքի մէջ իր այլ շահերը չլտանդելու համար, չէր ուզեր Սովետ. Միութեան օգնել: Թերեւս նաեւ անոր համար որ Թուրքիոյ վրայով Պաքուի քարիւղի դաշտերուն հասնելու գերմանական ծրագիր մը իրականացման չէր հաւատար:

Մրազերին զբուսելուն եւ Լոնտոն հասնելու միջոցին զինուորական կացութիւնն ալ փոխուած էր(40) :

1941 թ.ի Հոկտեմբերի 2-ին, զերմանացիները իրենց մեծ յարձակողականին սկսած էին Մոսկուայի շուրջ կուտակուած սովետական զօրքերուն դէմ: Հոկտեմբերի 20-ին, զերմանական զօրքերը Մոսկուայէն 40 մղոն հեռու էին: Բայց կացութիւնը շուտով յեղաշրջուեցաւ: Ռուսական աշնանային անձրեւները եւ ռասսուքիցան՝ ցիւխերու շրջանը սկսած էր, եւ զերմանացիք վատ կացութեան մատնուած: Թէեւ Նոյեմբերի 21-ին հարաւի ճակատին վրայ Ռոստով ինկած էր Ձօր. Գլէյսթի զերման ուժերուն, եւ Կէօպէլզ յալտարարած էր թէ «Կովկասի դուռը» բացուած էր, սովետական ուժերը յաջողած էին Ռոստովը վերադարձել հինգ օրեր ետք: Գերման հրամանատար Ձօր. Հայնց Կիւտերեան հետազային կը գրէր. «Մեր դժբախտութիւնները սկսան Ռոստովէն, այդ պատին վրայի զբուսելուն էր»(41): Նոյեմբերի 28-ին, Ֆորէյն Օֆիսի վերջին աննպաստ արձանագրութիւնը կը գրուէր Միջ-Ասիական Պիւրոյի ծրագրին տակ:

Կովկասեան վտանգը առժամաբար հեռացած էր: Այսուհանդերձ Կովկասի համար բուռն մարտերը տեղի պիտի ունենային 1942 թ.ի Յուլիսի 25-էն մինչեւ 1943 թ.ի Հոկտեմբերը:

40) Տ Հոկտեմբերի, 1941-ին, Գահիրէի «Ալ Ահրամ» կարեւոր օրաթերքը. Լոնտոնի «Տէյլի Մէյլ» օրաթերքէն առնելով կը գրէր թէ Հիթլերի դէպի Խարբով, Ռոստով եւ Խրիմ նոր յարձակողականին առաջին նպատակն էր Բարիզը, եւ երկրորդը այն ազդեցութիւնը, զոր կը յուսար ձեռք բերել Թուրքիոյ վրայ, եթէ նացի զօրքերը այդ պահուն գտնուէին Թուրքիոյ երկու սահմանազուխներուն (Թըրքական Թրակիոյ եւ Անդրկովկասի) վրայ: Հայկական Բարձրաւանդակը գրաւելու առաջադրող ծրագրին Լոնտոն հասած օրը. 28 Հոկտեմբերի, 1941-ին, նման կացութիւն մը չէր ստեղծուած:

41) William L. Shirer, op. cit., pp. 860-861.

## AN UNREALIZED PLAN OF OCCUPATION OF THE ARMENIAN PLATEAU DURING WORLD WAR II

ZAVEN MESSERLIAN

### (Summary)

On June 22, 1941, Germany implemented the « Operation Barbarossa », attacking the Soviet Union. Four days before, Germany and Turkey had signed up a non-aggression and friendship pact which invalidated the Turco-Soviet agreement of December 17, 1929. Although Turkey had promised to keep her neutrality in the Russo-German war, she virtually sided with Germany. The Turkish press kindled with pan-Turanian sentiments, meanwhile expressing hope that Turkey would have territorial gains at the expense of the Soviet Union. Exploiting the Turkish expectations, Germany promised Turkey Soviet lands if she joined the Axis. On the eve of the fall of Kiev at the hands of German forces, the Soviet Union requested that England send military aid to Caucasus via Persia, before the Donetz basin was lost to the Germans, for, once Caucasus fell, as a result, the Turks would no more keep their neutrality, While London turned down the Soviet plea, on the one hand, the Mid-Asiatic Bureau of the General Headquarters of the British Middle East Forces, in Cairo, on the other hand, prepared a «Top Secret» military plan, suggesting the immediate occupation of the Armenian Plateau (Kars-Erzurum-Bayazid) by Allied forces, should Germany attack Caucasus or Turkey allow the Germans free passage to Caucasus. The plan bore the signature of Lt. Col. Adrian Simpson, G.S., and it was prepared on September 14, 1941. But when it reached London on October 28th of the same year, the plan was considered an anachronism by the Foreign Office.